

## ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ : 7(479.25)(091) + 74/76(479.25)

DOI <https://doi.org/10.52853/25792830-2021.1-116>

### ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՈՒԽՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ԱՐԹՈՒՐ ԱՎԱԳՅԱՆ\*

Հայ արվեստագիտական մտքի զարգացումը հասել է այն մակարդակին, երբ հրատապ կարիք է զգացվում գոնե համառոտ կերպով ուրվագծելու նրա անցած ուղին, իմաստավորելու նրա փորձը, արժևորելու մշակութային նշանակությունը: Այդ խնդրի մասնավոր, լոկալ ասպեկտներից է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի դերը նոր և նորագոյն հայ կերպարվեստի ուսումնասիրության գործում: Զանազան գիտական նպասգծերի մշակմանն ու իրականացմանն ուղղված իր բազմայա գործունեության ընթացքում ինստիտուտն զբաղեցրեց տվյալ բնագավառում առաջնային տեղը՝ նմանատիպ այլ հաստատություններից առանձնանալով թե՛ իր գուտ ակադեմիական կարգավիճակով և թե՛ իր աշխատանքի մասշտաբներով և արդյունքներով:

**Բանայի բառեր** – հայ արվեստագիտության պատմություն, նոր և նորագոյն շրջանի հայ կերպարվեստ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ:

#### Ներածություն

Հայ արվեստագիտական մտքի զարգացումը հասել է այն մակարդակին, երբ հրատապ կարիք է զգացվում գոնե համառոտ կերպով ուրվագծելու նրա անցած ուղին, իմաստավորելու նրա փորձը, արժևորելու մշակութային դերն ու նշանակությունը: Մասնավորաբար դա վերաբերում է նոր և նորագոյն շրջանի ազգային կերպարվեստի պատմությանը, որը երբևէ չի դարձել գիտական հատուկ ուշադրության առարկա: Սույն հոդվածում փորձել ենք մասամբ լրացնել այդ բացը և դիտարկել այն դերը, որը նշված բնագավառում կատարել և շարունակում է կատարել դրա առաջատարը՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը<sup>1</sup>:

Անշուշտ, վերջինս, իբրև ակադեմիական հիմնարկ, կտրուկ առանձնանում է տվյալ ոլորտում մասնագիտացող նմանատիպ մյուս հաստատություններից: Սակայն ինստիտուտի ուրույն դիրքը, նրա ներկայիս անունն ու հեղի-

\* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, avart@rambler.ru, հոդվածի ներկայացման օրը՝ 21.12.2020, գրախոսման օրը՝ 25.01.2021, տպագրության ընդունման օրը՝ 03.02.2021:

<sup>1</sup> Սույն հոդվածը խնդիրն արձարձելու առաջին փորձն է: Նրա մանրակրկիտ, հանգամանալի քննությունը, մեր համոզմամբ, կպահանջի ավելի ընդարձակ ուսումնասիրություն:

նակությունը ձեռք են բերվել ոչ միայն սոսկ կարգավիճակի շնորհիվ, այլև բազմամյա գործունեության, զանազան գիտական ծրագրերի, հետազոտական, հրատարակչական, կազմակերպչական և բազում այլ նախաձեռնումների մշակման և իրագործման արդյունքում:

Իհարկե, նոր և նորագոյն հայ կերպարվեստի պատմական ուսումնասիրությունն սկիզբ է առել Արվեստի ինստիտուտի և նոյնիսկ Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրումից (1943) ավելի վաղ: Եթե չհաշվենք այն բազմաթիվ քննադատական հոդվածները, որոնք անմիջապես արձագանքում էին ժամանակի ստեղծագործական կյանքին, ապա կարող ենք ասել, որ նոր և նորագոյն հայ կերպարվեստի պատմությունն ամփոփելու, նրա հիմնական տեսակներն ու ժանրերն առանձնացնելու, առավել խոշոր, նշանավոր վարպետների արվեստը բնութագրելու անդրանիկ համակարգված փորձերը վերաբերում են 1930-ական թվականներին: Այդպիսին է, օրինակ, 1939-ին լույս տեսած «Օչերքի ու պատմության առաջնային առաջնային առանձնահատկությունները»՝ Մասնագիտական գրականության պակասի պայմաններում խիստ սպասված այս գիրը, այդուհանդերձ, զերծ չէր ներ ըմբռնումներից, գեղարվեստական երևույթները բացառապես սոցիալ-տնտեսական հարաբերությունների ազդեցությամբ պատճառաբանելու միտումից, գեղագիտական ուղղագիծ մեկնաբանություններից, որոնք մեծապես բնորոշ էին այդ տարիների խորհրդային, այդ թվում՝ հայ արվեստագիտական գրականությանը:

### 1948-1958 թվականներ

Մեր հարցի նախապատմությունը, հավանաբար, պետք է սկսել 1948 թվականից, երբ Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ կազմակերպվեց Արվեստների պատմության և տեսության սեկտորը: Կարճատև ընդհատումով այն գործեց շուրջ տասը տարի՝ 1958-ին վերաճելով առանձին ինստիտուտի: Սեկտորի հետազոտությունները ներառում էին ինչպես միջնադարյան, այնպես էլ նոր և նորագոյն շրջանի հայ կերպարվեստը, որի ուսումնասիրությանը ձեռնամուխ եղան արվեստաբաններ Մինաս Սարգսյանը, Եղիշե Մարտիրյանը, Ռուբեն Դրամբյանն ու Վահան Հարությունյանը: 1950-ական թվականներին նրանք պաշտպանեցին XIX-XX դարերի ազգային արվեստին նվիրված առաջին թեկնածուական ատենախոսությունները<sup>2</sup>, որոնց հիման վրա հետագայում լոյս տեսան

<sup>2</sup> Очерки по истории искусства Армении. Сборник статей. М.-Л., 1939, стр. 56-100:

<sup>3</sup> Ինստիտուտի պատմության ընթացքում նրա աշխատակիցներն ու ասպիրանտները պաշտպանել են մի քանի տասնյակ թեկնածուական և ընդհամենը երկու դրկտորական ատենախոսություն, որոնք ուղակիրթեն առնչվում են նոր և նորագոյն շրջանի հայկական կերպարվեստին: Դրանք են Ն. Ստեփանյանի և Ա. Աղայյանի համապատասխան աշխատությունները: Տե՛ս Ստեփանյան Հ. Искусство Армении: черты историко-художественного развития. Автограф. ...докт. искусствоведения. М., 1987,

Մ. Սարգսյանի «Հայկական և ոռուական կերպարվեստի կապերը XIX–XX դարերում»<sup>4</sup>, Ռ. Դրամբյանի «Եղիշե Թադևոսյան (կյանքը և ստեղծագործությունը)»<sup>5</sup>, Ե. Մարտիկյանի «Ստեփան Աղաջանյան»<sup>6</sup> մենագրությունները: Բացի այդ՝ սեկոորի գոյության օրոք հրատարակվեցին նկարիչներ Գևորգ Բաշինջառյանի, Մարտիրոս Սարյանի, Գաբրիել Գյուրջյանի կյանքն ու ստեղծագործությունը լուսաբանող ամփոփ աշխատանքներ՝:

Ինչ խոսք, գաղափարամեթոդաբանական առումով այդ աշխատանքներն այսօր մեծապես հնացած են թվում՝ կրելով հայրենի հումանիտար մտքի քաղաքական անազատության կնիքը: Սակայն դրանց շարքում կան իսկապես օրինական, գիտական բարեխսղճությամբ կատարած և գրեթե բացառապես սկզբանդրյունների վրա հիմնված հետազոտություններ, որոնք մինչ այժմ չեն կորցրել ճանաչողական արժեքը, երբեմն է՝ կոնկրետ վերլուծությունների, գնահատականների արդիականությունը<sup>8</sup>: Հայ արվեստի նշանավոր դեմքերին հանրությանը ներկայացնելու այդ անդրանիկ փորձերը պարզապես անհրաժեշտ էին որպես հիմնաքարեր՝ ժամանակակից հայ արվեստագիտության վերնակառուցը կանգնեցնելու համար:

Խորհրդային Միության Կոմկուսի ՀԽ համագումարին (1956) հաջորդած քաղաքական ու մշակութային գործընթացները, որոնք պոետի թեթև գրչով կոչվեցին «Ճնհալ», թափանցեցին նաև խորհրդային պատմագիտության (այդ թվում՝ արվեստի գիտության) ոլորտ: Բացվեց Երկրի հեռավոր ու մոտ անցյալը վերանայելու, վերստին քննելու, որոշ գիտաճյուղերի ժամանակագրական ու պրոբեմային դաշտն ընդլայնելու, մոռացված անուններ ու դարաշրջաններ ստվերից դուրս բերելու աննախադեպ հնարավորություն: Արվեստի պարագայում դրան գումարվեց մեկ այլ կարևոր գործոն. ստեղծագործական դրսւորումների այն արտառող առատությունը, որին ծնունդ տվեց խրուչովյան ռեֆորմը, լրացուցիչ խթան էր՝ մշակութային նորագոյն, արդի պրոցեսները շահագրգիռ ուշադրության արժանացնելու իմաստով:

### 1958-1991 թվականներ

Հենց այս բուօն, բեկումնային տարիներին կազմակերպվեց ԳԱ արվեստի ինստիտուտը (1958): Ունենալով բոլոր նախադրյանները՝ այն հետզհետեւ դարձավ նոր և նորագոյն հայ կերպարվեստի ուսումնասիրության

**Աղայան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում, արվ. դոկտ. ...սեղմագիր, Երևան, 2007:

**4 Սարգսյան Մ.**, Հայկական և ոռուական կերպարվեստի կապերը XIX–XX դարերում, Երևան, 1953:

**5 Դրամբյան Ռ.**, Եղիշե Թադևոսյան (կյանքը և ստեղծագործությունը), Երևան, 1955: Տե՛ս նաև **Դրամբյան Ռ.** Երևան, 1957:

**6 Մարտիկյան Ե.**, Ստեփան Աղաջանյան, Երևան, 1956: Տե՛ս նաև **Մարտիկյան Ե. Ստեփան Ագաճանյան**. Մ., 1958:

**7 Սարգսյան Մ.**, Մարտիրոս Սարյան, Երևան, 1955, **Նույնի**. Գևորգ Բաշինջառյան: Կյանքը և գործունեությունը, Երևան, 1957, Գաբրիել Գյորդյան. Ավտոր текста Մ. Այվազյան. Մ., 1957:

**8 Այդահսին Է.**, օրինակ, Ռ. Դրամբյանի «Եղիշե Թադևոսյան» գիրքը՝ մեծանուն հայ գեղանկարիչն ընծայված լավագոյն աշխատանքներից մեկը:

առանցքային կենտրոն: Այսուհետ դա կապված էր ոչ միայն ավագ սերնդի, այլև 1960-ականներին ասպարեզ եկած, գիտական առավել անկաշկանդ դիրքորոշումներ դրսւորող արվեստաբաններ Մանյա Ղազարյանի, Նոնա Ստեփանյանի, Լևոն Խալաթյանի, Վիլիելմ Մաթևոսյանի, Մարիամ Այվազյանի և այլոց անոնների հետ: Հետագայում՝ արդեն 1970-1980-ական թվականներին, նրանց շաբթը համարեցին Մարինա Ստեփանյանը, Արարատ Աղասյանը, Ռուզան Սարյանը, Ալիս Ներսիսյանը, որոնք դարձյալ հանդես բերեցին մասնագիտական թարմ նախասիրություններ և ուրույն մոտեցումներ: Սերունդների այդ շփումը, նրանց «Երկխոսությունն» ու բանավեճը (բացահայտ և թաքնված) սնում և հարստացնում էին արվեստագիտական միտքը, ծնավորում երբեմն լարված, բայց կենդանի, կենսատու մթնոլորտ:

Ուստի պատահական չէ, որ 1960-1980-ական թվականներն այդքան արգասարեր եղան ազգային նոր և նորագոյն կերպարվեստի ուսումնասիրության առումնվ: Հենց այդ տարիներին ինստիտուտի աշխատակիցները տպագրեցին ավելի քան տասնյակ հայ վարպետների, ի թիվս որոնց՝ Հակոբ Հովսարանյանի<sup>9</sup>, Ստեփանոս Ներսիսյանի<sup>10</sup>, Հովհաննես Այվազովսկու<sup>11</sup>, Վարդգես Սուլենյանցի<sup>12</sup>, Անդրեաս Տեր-Մարտուրյանի<sup>13</sup>, Մարտիրոս Սարյանի<sup>14</sup>, Հակոբ Կոջոյանի<sup>15</sup>, Հակոբ Գյուրջյանի<sup>16</sup>, Սեդրակ Առաքելյանի<sup>17</sup>, Ռաֆայել Շիշմանյանի<sup>18</sup>, Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի<sup>19</sup>, Ռուբեն Շահվերդյանի<sup>20</sup>, Արա Բերարյանի<sup>21</sup>, Գրիգոր Խանջյանի<sup>22</sup>, Նանա Գյուլիքիսյանի<sup>23</sup>, Ռաֆայել Աթոյանի<sup>24</sup> կենսագրական ու ստեղծագործական ուղին ներկայացնող գրքեր և ալբոմներ: Սեղանին դրվեցին < Այվազովսկուն նվիրված փաս-

<sup>9</sup> Հակոբ Հովսարանյան. Ալրոմ, Առաջարանի հետ.՝ Ռ. Դրամբյան, Երևան, 1969,  
**Կազարյան Մ.** Խудожники Овнатааняны. Մ., 1968:

<sup>10</sup> **Սարգսյան Մ.**, Ստեփանոս Ներսիսյան, Երևան, 1985:

<sup>11</sup> **Սարգսյան Մ.**, Հովհաննես Այվազովսկի, Երևան, 1976:

<sup>12</sup> **Ղազարյան Մ.**, Վարդգես Սուլենյանց, Երևան, 1960, **Հարությունյան Վ.** Վարդգես Սուլենյանց, Երևան, 1960, **Կազարյան Մ.** Ըստենաց. Մ., 1962:

<sup>13</sup> **Սարգսյան Մ.**, Անդրեաս Տեր-Մարտուրյան, Երևան, 1960:

<sup>14</sup> **Դրամբյան Ռ.**, Մարտիրոս Սարյան, Երևան, 1960, **Խալաթյան Լ.**, Սարյանը և թատրոնը, Երևան, 1960, **Դրամպյան Բ.** Мартирос Сергеевич Сарьян. Մ., 1964, **Մաթևոսյան Վ.**, Մարտիրոս Սարյան, Երևան, 1975:

<sup>15</sup> **Դրամպյան Բ.** Ակոپ Կարապետովի Կօճօյն. Մ., 1960, **Մաթևոսյան Վ.** Հակոբ Կոջոյան: Արվեստը, Երևան, 1971, **Մաթևոսյան Վ.**, Հակոբ Կոջոյան, Երևան, 1983:

<sup>16</sup> **Դրամպյան Բ.** Ակոպ Գյորջյան. Երևան, 1973.

<sup>17</sup> **Մաթևոսյան Վ.**, Սեդրակ Առաքելյան, Երևան, 1963:

<sup>18</sup> Ռաֆայել Շիշմանյան, Ալրոմ, <Եղ.-կազմող՝ Մ. Այվազյան, Երևան, 1985:

<sup>19</sup> **Դրամպյան Բ.** Ալեքսանդր Բաշեուկ-Մելիքյան. Մ., 1971.

<sup>20</sup> **Ստեփանյան Մ.** Շավերճյան Ռубեն. Ալբոմ. Ժивопись, скульптура. Մ., 1982.

<sup>21</sup> **Կազարյան Մ.** Արա Բեկարյան. Մ., 1979.

<sup>22</sup> **Կազարյան Մ.** Գրիгор Խանճյան. Մ., 1968, Գրիգոր Խանջյան, Ալրոմ, Տերստի հետ. Մ. Ղազարյան, Երևան, 1978, **Ստեփանյան Հ.**, **Զурабов Բ.** Գրիгор Խանճյան. Ժивопись, графика. Մ., 1987:

<sup>23</sup> Գյուլիկեախյան Նանա. Արմենիա – песня моя. Ալբոմ. Вступ. статья М. Айвазян. Մ., 1974.

<sup>24</sup> **Ստեփանյան Մ.** Րաֆայէլ Ատօյն. Ալբոմ. Մ., 1988.

տաթղթերի և նյութերի ժողովածուն<sup>25</sup>, Մ. Սարյանի հուշերը<sup>26</sup>, վերջինիս կյանքի և գործունեության ընդարձակ տարեգրությունը<sup>27</sup>: Հրապարակվեցին նոր և նորագույն հայ կերպարվեստի ընդհանուր հարցերին, մասնավորապես դրա տեսակներին<sup>28</sup>, ժանրերին<sup>29</sup>, առնչություններին<sup>30</sup>, հավաքածուներին<sup>31</sup>, երիտասարդ ուժերին<sup>32</sup> վերաբերող բազմապիսի աշխատանքներ: Ինչպես ակադեմիական, այնպես էլ գիտահանրամատչելի շարադրանքի ձևաչափով վերստին համակարգվեց և ի մի բերվեց XIX–XX դարերի հայ արվեստի պատմությունը: Նկատի ունենք Ն. Ստեփանյանի<sup>33</sup>, Մ. Այվազյանի<sup>34</sup>, Մ. Ղազարյանի<sup>35</sup> հեղինակային, նաև՝ «Очерки по истории армянского изобразительного искусства»<sup>36</sup>, «Искусство Советской Армении за 60 лет»<sup>37</sup> և «Армянское советское искусство на современном этапе»<sup>38</sup> կոլեկտիվ հրատարակությունները, որոնք, թեև գրված էին ողութեն, այդուհանդերձ ծառայում էին իրենց նպատակին: Դրան զուգահեռ՝ ինստիտուտի մասնագետներն ակտիվ համագործակցում էին հանրապետական և միութենական գիտական հանդեսների, պարբերականների, հրատարակչությունների հետ, իսկ նրանցից մի քանին ընդգրկվեցին Մոսկվայում լույս տեղնող «История искусства народов СССР» բազմահատօրյակի և «Искусство стран и народов мира. Краткая художественная энциклопедия» երկիհատորյակի հեղինակային կազմում: Այդպիսով նոր և նորագույն հայ կերպարվեստի պատմագիտությունն ընդլայնում էր շրջանակը, ձեռք բերում բազմաթերթ և բազմահազար լսարան, ինչը, անշուշտ, մեծ նվաճում էր թե՛ ինստիտուտի, թե՛ առհասարակ հայ արվեստագիտության համար:

<sup>25</sup> Айвазовский: документы и материалы. Сост. М. Саргсян и др. Ереван, 1967.

<sup>26</sup> Սարյան Մ., Գրառումներ իմ կյանքից. Գիրք առաջին, Երևան, 1966, Սարյան Մ. Իз моей жизни. М., 1980:

<sup>27</sup> Ղազարյան Մ., Աղասյան Ա., Մարտիրոս Սարյան. Կյանքի և ստեղծագործության տարեգրություն, Երևան, 1980:

<sup>28</sup> Սարգսյան Մ., Սովորական Հայաստանի գրաֆիկան, Երևան, 1961:

<sup>29</sup> Այվազյան Մ. Пейзаж в армянской советской живописи. Ереван, 1978.

<sup>30</sup> Սարգսյան Մ., Պետերքուրզի գեղարվեստի ակադեմիան և հայ նկարիչները, Երևան, 1979:

<sup>31</sup> Դրամպյան Բ. Государственная картинная галерея Армении. М., 1982.

<sup>32</sup> Հայաստանի երիտասարդ նկարիչները. Ալրոմ, Կազմով՝ Ֆ. Միրզոյան, տեքստի հետ.՝ Ա. Աղասյան, Երևան, 1987:

<sup>33</sup> Ստեփանյան Հ. Искусство Армянской ССР. М., 1967, Նույնի. Очерк изобразительного искусства Армении. М., 1985, Նույնի. Искусство Армении: черты историко-художественного развития. М., 1989.

<sup>34</sup> Իզմայլովա Տ., Այվազյան Մ. Искусство Армении. М., 1969.

<sup>35</sup> Изобразительное искусство Армянской ССР. Автор-составитель М. Казарян. М., 1978.

<sup>36</sup> Очерки по истории армянского изобразительного искусства. Отв. редактор М. Айвазян и др., Ереван, 1979.

<sup>37</sup> Искусство Советской Армении за 60 лет. Сост.-редактор Г. Геодакян. Ереван, 1980.

<sup>38</sup> Армянское советское искусство на современном этапе. Сост.-редактор Г. Геодакян. Ереван, 1987.

Այս տեսակետից ոչ պակաս կարևոր էր ինստիտուտի նախաձեռնությամբ կամ նրա գործուն մասնակցությամբ հանրապետական, միութենական և միջազգային գիտաժողովների կազմակերպումը: Առանձնացնենք միայն մեկը՝ հայ արվեստին նվիրված Երկրորդ միջազգային սիմպոզիումը (Երևան, 1978), որն իսկական իրադարձություն էր հանրապետության գիտական ու մշակութային կյանքում: Նոր և նորագույն հայ կերպարվեստին հատկացված էր հատուկ մասնաճյուղ, որի նստաշրջաններին ներկայացվեցին մի շարք կարևոր, ծրագրային գեկուցումներ, ինչպես, օրինակ, Ռ. Դրամբյանի «Ակոپ Օվհատանյան», Մ. Ստեփանյանի «Պորտրետ բ արմենական կամաց արմենական մասնաճյուղ», Ա. Ստեփանյանի «Իстоки современной армянской живописи», Վ. Այվազյանի «Творческие поиски в армянской живописи 1960-1970-х годов» թեմաներով ելույթները: Ազնիայտ էր, որ XIX-XX դարերի հայ կերպարվեստն իր հարուստ ժառանգությամբ ու գեղագիտական անվիճելի արժանիքներով պահանջում է նոյնքան խոհուն մոտեցում, նոյնքան խորաթափանց հայացք, որքան՝ հին և միջնադարյան մշակույթը: Պարզ դարձավ նաև, որ Հայաստանում կա համապատասխան ներուժ, կան կարող մասնագետներ, որոնք արդի գեղարվեստական երևույթները դիտարկում են ոչ թե սույն տեղական, այլ տարածաշրջանային, գլոբալ իրողության համատեքստում: Հավանաբար, հենց դա նկատի ուներ ականավոր արվեստարան Ալեքսանդր Կամենսկին, երբ ասում էր, թե «...սիմպոզիումի ընթացքում մենք ուսումնասիրում էինք ոչ միայն լոկ հայերի ստեղծագործական ներդրումը: Ըստ էության, մենք այստեղ գրադարձում էինք համաշխարհային գեղարվեստական մշակույթով՝ դրա չափազանց արտահայտիչ և բովանդակալից հայկական տարբերակով»<sup>39</sup>:

1991-2020 թվականներ

Յավոր, այս պրոցեսների բնականոն ընթացքը կտրուկ խափանվեց պատմական ցնցումների բերումով. 1991-ին փլուզվեց Խորհրդային Միությունը, և Արվեստի ինստիտուտը, ինչպես և ողջ ակադեմիական համակարգը, հայտնվեց ծայրաստիճան բարդ պայմաններում: Հայաստանի սոցիալ-տնտեսական ճգնաժամը, ըստ Էռիքյան, կաթվածահարեց հետազոտական ու հրատարակչական գործը, գիտական և մշակութային հիմնարկները բախվեցին իրենց գոյությունը պահպանելու խնդրին: Վրա հասան նաև ցավալի մարդկային կրորուտներ. կյանքից հեռացան ինստիտուտի հին աշխատակիցներ, հայ կերպարվեստի գիտակներ Ռուբեն Դրամբյանը (1991) ու Մանյա Ղազարյանը (1998): Թերևս ամենահուսահատեցնողն այն էր, որ հայագիտության ստվար մի հատված արագորեն մեկուսանում էր, պարփակվում գրւա տեղական, ներազգային շրջանակներում՝ զրկվելով ոչ միայն նախկին լսարանից, այլև մասնագիտական հարթակներից, շիումներից, հաճախ՝ ակտուալ տեղեկատվությունից, որոնք պարզապես անհրաժեշտ են գիտական մտքի նորմալ գոյատևությունն ապահովելու համար:

<sup>39</sup>Հայ արվեստին նվիրված միջազգային Երկրորդ սիմպոզիում, հ. IV, Երևան, 1981, էջ 371:

Այսուհանդերձ, 1990-ական թվականները նշանավորվեցին նաև դրական փոփոխություններով: Հայաստանի անկախության հռչակումը (1991), խոսքի բաղձալի ազատականացումը, գրաքննության վերջնական նահանջը թույլ տվեցին վերաբացել ազգային պատմության էջերը, նորովի դառնալ նրա դասերին, թարմ հայացք նետել հեռավոր և մոտ անցյալի մշակութային ժառանգությանը: Հակառակ բոլոր օբյեկտիվ ու սուբյեկտիվ դժվարությունների՝ այդ անցումային տարիներին լրյու ընծայվեցին Ա. Աղասյանի «Մարտիրօս Սարգսյան. Ռանու տարօնք»<sup>40</sup> և «Երվանդ Կոչար»<sup>41</sup>, Ա. Ավագյանի «Գևորգ Գրիգորյան (Ջոտո)»<sup>42</sup> մենագրությունները, ինստիտուտի հովանու ներքո անցկացվեցին հայ արվեստի VII (1995) և VIII (1997) հանրապետական կոնֆերանսները, տևական դադարից հետո վերաբացվեց կերպարվեստի բաժնի ասափիրանտուրան: 1995-ին ինստիտուտում ստեղծվեց արվեստագիտության՝ Հայաստանում առաջին և առայժմ միակ մասնագիտական խորհուրդը, ուր սկսեցին պաշտպանության դրվել նոր և նորագոյն շրջանի հայ կերպարվեստին վերաբերող ատենախոսություններ<sup>43</sup>: Այսպիսով, 1990-ական թվականներին մեզ հետաքրքրող ուղղությամբ տարվող աշխատանքն ինստիտուտում չէր դադարում, թեև իրագործվում էր նվազագույն ուժերով և ծայրաստիճան համեստ ծավալներով:

Բայց և այնպես հարկավոր եղան տարիներ, որպեսզի այդ իիմնարկը մոտենա իր գործունեության նախկին ինտենսիվությանն ու մասշտաբներին: Դրա նախանշանները երևան եկան արդեն մեր հազարամյակում, երբ քիչ թե շատ կարգավորվեց Հայաստանի գիտամշակութային օջախների կանոնավոր աշխատանքը, հոնի մեջ ընկան պարբերականներն ու հրատարակչական գործը: Արվեստի ինստիտուտը թերթեց իր պատմության ներկայիս էջը: XIX–XX դարերի հայ կերպարվեստի ուսումնասիրության ոլորտ ներգրավվեցին ինստիտուտի ասպիրանտներ, այնուհետև՝ աշխատակիցներ Արթուր Ավագյանը, Գարեգին Քոթանջյանը, Մանե Մկրտչյանը, Մարգարիտա Քամայանը: Մենագրություններ և ալբոմներ հրատարակվեցին խորհրդահայ գրքարվեստի մեծերի (Մ. Սարյան, Հ. Կոջոյան, Մ. Արուտյան)<sup>44</sup>, Վահրամ Գայֆենցյանի<sup>45</sup>, Փարավոն Միրզոյանի<sup>46</sup>, Հակոբ Հովնաթանյանի<sup>47</sup>, Հենրի

<sup>40</sup> **Ագասյան Ա.** Մարտիրօս Սարգսյան. Ռանու տարօնք. Երևան, 1992. 2012-ին գիրքը վերահրատարակվեց որոշ կրճատումներով՝ այս անգամ արդեն պատկերազարդ (տե՛ս նաև **Ագասյան Ա.** Սիմվոլիզմ և տարօնք Մարտիրօս Սարգսյան. Երևան, 2012):

<sup>41</sup> **Ագասյան Ա.** Երվանդ Կոչար. Երևան, 1999.

<sup>42</sup> **Այվազյան Մ.** Գևորգ Գրիգորյան (Ջոտո). Երևան, 1997.

<sup>43</sup> Դրանցից առաջինը սողերին հերիխակի թեկնածուական թեզն էր: Տե՛ս. Ավագյան Ա., Հայաստանի գեղարվեստական կյանքը 1920–1932 թթ. (կերպարվեստ): Արվ. թեկն. ...սեղմագիր, Երևան, 2000:

<sup>44</sup> **Մաթևոսյան Վ.**, Երեք կիսադեմ. Սարյան, Կոջոյան, Արուտյան, Երևան, 2002, Նույնի. Հակոբ Կոջոյան, Երևան, 2003:

<sup>45</sup> Վագրա Գայֆենցյան. 1879–1960. Ալբոմ. Сост. и автор очерка Э. Гайֆеджян. Авт. статьей Н. Котанджян (отв. ред.), Г. Игитян, Р. Адалян. Ереван, 2002.

<sup>46</sup> Փարավոն Միրզոյան. Կատալոգ, Հեղ.՝ Ա. Աղասյան, Է. Միանսարյան, Լ. Զուգասյան: Կազմ.՝ Ա. Գասպարյան, Ա. Հակոբյան, Երևան, 2005:

<sup>47</sup> **Դրամպյան Բ.** Ակոپ Օվնատանյան (1806–1881). Երևան, 2006.

Էլիբեկյանի<sup>48</sup>, Տաճատ Խաչվանքյանի<sup>49</sup>, Քաջազի (Քաջազունի Քեչեճյան)<sup>50</sup>, Երվանդ Քոչարի<sup>51</sup>, Վարդգես Սուլթենյանցի<sup>52</sup>, Ղուկաս Չուբարյանի<sup>53</sup>, Հարություն Կալենցի<sup>54</sup>, Էդուարդ Խարեկյանի<sup>55</sup>, Փանոս Թերլեմեզյանի<sup>56</sup>, Հովհաննես Այվազովսկու<sup>57</sup>, Էդուարդ Արծրունյանի<sup>58</sup> մասին: Լոյս տեսան Մ. Սարյանի նամականու առաջին, ապա՝ երկրորդ հատորները<sup>59</sup>, հայ նկարիչների և քանդակագործների գրական ժառանգության ընտրանին<sup>60</sup>, արվեստաբաններ Վ. Մաթևսյանի<sup>61</sup> և Ռ. Դրամբյանի<sup>62</sup> հոդվածների հետմահու ժողովածուները, «Արյուն Կալենց և այլ հայության առաջական աշխարհ» բովանդակալից հատորը<sup>63</sup>: Հայ կերպարվեստի պատմության նորանոր հարցադրումներ հնչեցին Ա. Ավագյանի<sup>64</sup>, Ա. Ներսիսյանի<sup>65</sup>, Ա. Աղասյանի<sup>66</sup>, Ռ. Սար-

<sup>48</sup> Հենրի Էլիբեկյան, Ալբոմ, Հոդվ. հեղ., Ս. Մանուկյան, Լ. Սարգսյան և ուրիշներ, Երևան, 2006:

<sup>49</sup> Տաճատ Խաչվանքյան, Ալբոմ, Կազմ., տեքստի և ծանոթագրությունների հեղ., Ա. Ավագյան, Երևան, 2007:

<sup>50</sup> Աղասյան Ա., Քաջազի մշտավառ կանթեղը, Երևան, 2009:

<sup>51</sup> Աղասյան Ա., Երվանդ Քոչարի տարածության մեջ, Երևան, 2013:

<sup>52</sup> Աղասյան Ա., Վարդգես Սուլթենյան (1860–1921), Ալբոմ, Երևան, 2010:

<sup>53</sup> Ղուկաս Չուբարյան. 1923–2009. Պատկերագիրք, Առաջարանի հեղ., Ն. Քոյանցյան, Երևան, 2012:

<sup>54</sup> Ներսիսյան Ա. Խудожник Арутюн Каленц. Жизнь и творчество. Ереван, 2012.

<sup>55</sup> Էդուարդ Խարեկյան–100, Առաջարանը՝ Ա. Աղասյանի, Երևան, 2014:

<sup>56</sup> Կիրակոսյան Մ., Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 2014:

<sup>57</sup> Աղասյան Ա., Ծովով հափշտակվածը. Հովհաննես Այվազովսկի (նկարչի ծննդյան 200-ամյակի առթիվ), Երևան, 2017:

<sup>58</sup> Ստեփանյան Մ. Խудожник Эдуард Арутрунян. Монографический альбом. Ереван, 2017.

<sup>59</sup> Սարյան Մ., Նամակներ, հ. 1–2. Երևան, 2002–2012:

<sup>60</sup> Արմянские художники об искусстве. Деятели армянского искусства об искусстве. Авт.-сост. Я. Хачикян, М. Казарян. Ереван, 2004.

<sup>61</sup> Մաթևսյան Վ., Ուսումնասիրություններ, Երևան, 2014:

<sup>62</sup> Դրամբյան Բ. Из истории армянского искусства. Сборник статей. Ереван, 2016.

<sup>63</sup> Արյուն Կալենց և այլ հայության առաջական աշխարհ» բովանդակալից հատորը<sup>63</sup>:

<sup>64</sup> Ավագյան Ա. Из истории художественной жизни Армении: 1920–1932. Ереван, 2002.

<sup>65</sup> Ներսիսյան Ա. Человек и природа. Армянская живопись второй половины XX века. Ереван, 2004.

<sup>66</sup> Հայերը Սանկտ Պետերբուրգի գեղարվեստական կրթօջախներում (XIX–XX դդ.), Կազմ.՝ Ռ. Հակոբյան. Հեղ. կազմ՝ Ա. Աղասյան և ուրիշներ, Երևան 2004, Ագասյան Ա., Բագդամյան Ի. Դва цвета радуги – двух судеб отражение.... Произведения армянской и русской живописи из музеев Армении. М., 2010, Աղասյան Ա., Ասատրյան Ա., Հայուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ (XIX դար–XX դարի սկիզբ), Երևան, 2015, Աղասյան Ա., Հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստներն Օսմանյան կայսրության տարածքում (համիլյան ջարդերից մինչև մեր օրերը), Երևան, 2018, Նոյնի. Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աշքերով, Երևան, 2019:

յանի<sup>67</sup>, Գ. Քոթանցյանի<sup>68</sup>, Մ. Մկրտչյանի<sup>69</sup>, Լ. Դոլովսանյանի<sup>70</sup> և այլոց մենագրություններում: Եթե այս ամենին հավելենք ինստիտուտի պատերում գրված բազմապիսի հոդվածներն ու գեկուցումները, նրա մասնագիտական խորհրդում պաշտպանված շուրջ երկու տասնյակ դիսերտացիաները, որոնք վերաբերում են խնդրո առարկա ժամանակաշրջանին՝ կստանանք հուադրող պատկեր: Ի դեպ, նոր և նորագոյն հայ կերպարվեստի ուսումնասիրության գործին շոշափելի ավանդ թերեցին ինստիտուտի երիտասարդ մասնագետները, որոնց համար կարևոր ամբիոն հանդիսացան 2005-ից այստեղ պարբերաբար կազմակերպվող երիտասարդ արվեստաբանների գիտաժողովները և «Կանթեղ» գիտական հանդեսը, իսկ վերջերս՝ նորաստեղծ «Արվեստագիտական հանդեսը»:

Այսուհանդերձ, չնայած հրապարակումների այս առատ հոսքին, ազգային նոր և նորագոյն կերպարվեստի լուսաբանման մեջ մի էական բաց էր նկատվում: Չկար այդ ժամանակաշրջանի պատմությանը նվիրված մի ամբողջական հայերեն աշխատություն, որը կամփոփեր պատմագեղարվեստական ողջ նյութը՝ պլաստիկական ստեղծագործության բոլոր տեսակների ընդգրկումով: Նման աշխատության կարիքը վաղուց հասունացել էր: Եղած բացը լրացնելու եկավ <<ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր Ա. Աղայանի «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» մեծածավալ մենագրությունը, որը ազգային նոր և նորագոյն գեղարվեստական մշակույթը ներկայացավ արվեստի տեսակների, ժանրերի, ստեղծագործական ուղղությունների և «դերակատարների» ողջ բազմազանությամբ<sup>71</sup>: Զերծ լինելով գաղափարական այն բենից, որը երեմն ստվերում էր խորհրդային տարիներին լույս տեսած համանման ծեռնարկները, գիրքը բովանդակում էր նոր նյութ, որն ինչ-ինչ պատճառներով վրիպել էր նախորդ հետազոտողների հայացքից կամ միտումնավոր անտեսվել, ընդ որում՝ փաստական և մատենագիտական բազում ճշտումներով, որոնք ապահովեցին հատորի տեղեկատու արժեքը: Տեքստի «թեթևացված» տարբերակն առանձին բաժնով գետեղվեց << պետական մրցանակի արժանացած «Հայ արվեստի պատմություն» կոլեկտիվ հրատարակության մեջ՝, որը ևս լայն ար-

<sup>67</sup> Սարյան Բ. Սարյան և Ռուսան. Երևան, 2006.

<sup>68</sup> Քոթանցյան Գ., Իմպրեսիոնիզմի գեղարվեստական ժառանգությունը և հայ գեղանկարչությունը (XIX դ. երկրորդ կես-XX դ. առաջին կես), Երևան, 2014:

<sup>69</sup> Մկրտչյան Մ., Սիմվոլիզմ. արձագանքը հայ կերպարվեստում. XIX դարի վերջ-XX դարի սկիզբ, Երևան, 2015:

<sup>70</sup> Դոլովսանյան Լ., Էլոյան Ա. Քանդակը հայկական ճարտարապետության մեջ. XX դար: Սինթեզի հարցեր, Երևան, 2018:

<sup>71</sup>Տե՛ս Աղայան Ա., Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, նաև՝ մեր գրախոսականը՝ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2009, № 2, էջ 259-262:

<sup>72</sup> Աղայան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, Երևան, 2009: Այս հրատարակությունը սկզբնապես մտահղացվել էր որպես դասագիրը և չի պարունակում հղումներ ու ծանոթագրություններ: Մինչդեռ դրանք կարևոր դեր են խաղում Ա. Աղայանի մենագրության մեջ՝ ընթերցողին մա-

ձագանք ստացավ թե՝ մասնագետների, թե՝ ուսանողության ու լայն հանրության շրջանում:

### **Եզրակացություն**

Այսպիսով, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի բազմաթեղուն գործունեության շնորհիվ հետզհետե ձևավորվեց ազգային նոր և նորագույն կերպարվեստի զարգացման բավական հստակ և գունեղ մի պատկեր: Անշուշտ, դա ուրախայի է, սակայն բնավ չի նշանակում, թե գիտական այս ոլորտուն եղած բոլոր խնդիրներն այսքանով լուծված կամ առաջադրված են: Հակառակը, մեր օրերում նոր և նորագույն հայ կերպարվեստի պատմագիտությունը մշակել է մի հիմք, որին ապավիճելով հարկ է փնտրել նոր, դեռևս անհայտ հորիզոններ:

## **ВКЛАД ИНСТИТУТА ИСКУССТВ НАН РА В ИЗУЧЕНИЕ АРМЯНСКОГО ИЗОБРАЗИТЕЛЬНОГО ИСКУССТВА НОВОГО И НОВЕЙШЕГО ПЕРИОДОВ**

АРТУР АВАГЯН

Современный уровень развития армянской искусствоведческой мысли диктует необходимость хотя бы вкратце очертить пройденный ею путь, осмыслить ее опыт, оценить культурное значение. Одним из частных, локальных аспектов этой проблемы представляется роль Института искусств НАН РА в изучении армянского изобразительного искусства нового и новейшего периодов. В ходе своей многолетней деятельности, направленной на выработку и реализацию различных научных проектов, Институт занял ведущее место в означенной области, выделяясь среди аналогичных ему учреждений как своим сугубо академическим характером, так и масштабами и результатами работы.

**Ключевые слова** – история армянского искусствознания, армянское изобразительное искусство нового и новейшего периодов, Институт искусств НАН РА.

## **CONTRIBUTION OF NAS RA INSTITUTE OF ARTS TO THE STUDY OF ARMENIAN FINE ART OF THE NEW AND NEWEST PERIODS**

ARTUR AVAGYAN

The current level of development of Armenian art criticism requires to at least briefly outline the passed path, conceptualize the experience, and evaluate its cultural significance. One of the specific, local aspects of this problem is the role of NAS RA Institute of Arts in the study of Armenian fine arts of the new and newest periods. During the many years of its activity, targeted at the develop-

---

տուցելով փաստական ու մատենագիտական ընդարձակ, մանրամասն տեղեկատվություն:

ment and implementation of various scholarly projects, the Institute holds one of the leading positions in this field, stands out among similar institutions thanks to its purely academic approach, as well as the scale and results of its work.

**Key words** – history of Armenian art criticism, Armenian fine arts of the new and newest periods, NAS RA Institute of Arts.